

Որոնց արեան տարբեր հոտն  
 Ըստ սերերու տարբերութեան կը կանչէ  
 Չիրենք այն մեծ Ջայլին՝ որուն վըրայ դեռ  
 Ապագաներ պիտ' ջայլեն:  
 Ամեն իրենց մեռելներն հոն կը գըտնեն,  
 Կ'իյնան իրենց մեռելին քով ծընրադիր  
 Եւ լաջակներն ու կըրկնոցներն ըսպիտակ  
 Չարթնող սուրբի մ'պատանքին պէս ետ նետած,  
 Մերկ ծոցերով, աղաղակով, ողբանքով  
 Ծունկերն իրենց կը ծեծեն,  
 Կը փեթըռռտեն մազերնին,  
 Իրենց կուրծքէն կը ժայթքի բառ մը ոխով,  
 -Անէ՛ծք... ու սե՛ւ շիրիմներուն մէջ իսլամ  
 Բոլոր ոսկրերն իրարու դէմ կը ջարդեն.  
 -Անէ՛ծք... ու թո՛ւրք մայրերուն մութ ծոցին մէջ  
 Կաթը կ'ըլլայ սընդիկ կամ խիւս եղիճի.  
 -Անէ՛ծք... ու վե՛րն, Եըլտըզ-Քեօշկի երդին վրայ  
 Բու մը հըսկայ կը դընէ բոյնն իր ըսկայ:  
 Լացէ՛ք, լացէ՛ք, ո՛վ հեզ Մայրեր, հեզ հարսեր,  
 Աստղերէ ա՛ստըղ ձեր ողբանքը ձըգած՝  
 Այսօր մեր սեւ հողին վրայ  
 Սա մորթըւած Արշալոյսները լացէ՛ք...  
 Թող ձեր բիբերն ինկածներուն վրայ հազար  
 Արտասուելէն իրենց լոյսէն դատարկուին:  
 Վերջին լացն է. հա՛պա, խածէք ըստինքնիդ.  
 Յուսհատօրէն դագաղներուն վրայ ծըռած՝  
 Թողէք մէկտեղ կափարիչի տակ գամուին  
 Ծայրերը ձեր մազերուն,  
 Եւ խոշտանգուած ձեր իգութիւնն իր յետին  
 Տըկարութեան մէջ փըշրի:  
 Օն, հառաչ մ'ալ, արցունք մըն ալ, վերջի՛նն է.